

Անտարակ, — սուսերիկ, (″ = խաչ) — բուրվաս,
իսկ միւս մասին վրայ՝ արձանագիրք.

Քաջաց ախոյան բանիւ ձարտաւան
Թողեալ զաշակունս եմոշտ յայս տոսպան
Ասադ քեզ կարդան ազքնի աւնենայն
Քառնակայ ընտրեալ Յովսէփ սնվանեալ:

Հասարեց

Հ. ԳՐԾ. ԱՅՏԸՆԵԱՆՑ

Անգստահրապու, 17/30 Յուլիս 1913

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՍԻԹԵԱՆ

Ք Ե Ր Թ Ո Ղ Ը

Rudyard Kipling, հայրենիքէն դուրս
աւելի ծանօթ է իբրեւ վիպասան, իբրեւ
պատմիչ մը մանր նորալուրերու և լու-
սոյ, քան թէ իւր քերթութեանց հինգ հա-
տորենբով, կամ այն երգերուն համար
զորս առանձին ձայներ և կամ բազմա-
ձայն երգչախումբեր կը կրկնեն ամբողջ
աշխարհին պողոտաներուն վրայ: Եւ սա-
կայն — դիտել կու տայ ժընըվիէվ Ռիւք-
սդոն Revue Hebdomadaire — ի մէջ
(XXIII. 10) — այս կայսերական բա-
նաստեղծը կենդանի, գործունեայ զօրու-
թիւն մ'է, որ կը խանդավառէ անհատ-
ներ և կը վարէ կը տանի ամբողջ ժողո-
վուրդ մը: Է ստուգիւ այն՝ ինչ որ պէտք
էր ըլլալ որ և է բանաստեղծ մը՝ այն՝
որ յառաջադէմ կը քալէ ուղեցոյց ըլլա-
լու համար հետևողաց:

Երբ կ'ըսենք թէ Քիբլինկ կայսերա-
կան բանաստեղծ մ'է, կայսերութիւն կամ
տիեզերակալութիւն բառին (Impériali-
sme) չենք տար այն ռազմասէր և աս-
պատակող իմաստը, ինչ որ այսօր յօժարա-
կամ կու տան անոր ընդհանրապէս, այլ
կ'ուզենք նշանակել միայն այն ճիշդ, որ
ամբողջ անկլուսաքսոն ցեղին կը ջանայ
տալ միութիւն մը զգացմանց և գործու-

նէութեան: Անշուշտ, բանակն է կարողու-
թեան առաջին գործին, և Քիբլինկ ալ եր-
գած է բանակը. ծոփն է Անգղիոյ տէրն
ու ծառայն, Քիբլինկ երգած է ծովը.
Անգղիոյ զօրութիւնն են այն ամէնքը որ
կ'աշխարհակալին երկիրներ և վաճառակա-
նութեան ասպարէզներ՝ որ նորանոր ու-
ղիներ կը բանան, և Քիբլինկ երգած է
այս տիեզերակալութեան յառաջընթաց կա-
րապետները. և վերջապէս երգած է նաև
կրօնական քերթութեաները. կարելի է մի-
թէ ըլլալ ժողովրդեան մը առաջնորդ,
վարիչ, փառոս մը լուսատու, առանց
ճանչնալու յաւիտենական իրերը:

« Ես քննադատական վերլուծում մը
պիտի չնեղկայացնեմ ձեզ Քիբլինկի բա-
նաստեղծութեանց, և ոչ ալ պիտի ու-
սումնասիրեմ իւր իմաստուն արուեստը,
— կ'ըսէ Ռիւքսդոն. — հանդիպեցայ մար-
դու մը, որուն երգը նորօրինակ էր, խո-
րին և բերկրալից. լսեցի որ ամէնքը կը
կրկնէին անոր երգերը... և ես ըմբռնեցի
այս երգերը, որովհետեւ կ'ապրեմ Անգղիոյ
զաղեքականութեանց մէջ, կ'ապրեմ այն
անձանց մէջ որոնք այս երգերը կը կրկնեն
արշաւանքէ մը վերջ կամ մինչ զէն ի
ձեռին կը հսկեն: Պիտի ջանամ ընթեր-
ցողներուս հասկցնել ամբողջ անգղիացի-
ներու մէջ ժողովրդական դարձած այս
կենդանի բանաստեղծին գործն ու ո-
գին »:

Առաջին քայլերը

Անկարելի է Գիրլինկի բանաստեղծու թեան վրայ խօսիլ առանց յիշելու անոր կեանքը և հայրենի ծննդավայրը։ Ռիւս տիարտ Գիրլինկ ծնաւ Հնդկաստանի մէջ, ի Պոմպէյ 1865 ղեկտեմբեր 30ին։ Ուստի դեռ և ոչ իսկ յիսնամեայ է. ծնաւ «այն մեծ քաղաքին մէջ որ կը գտնուի ընդ մէջ արմաւենեաց և ծովու, և ուր կը մերձենան նաւեր որ ամբողջ աշխարհիս երեսը կը շրջին»։ Խոր հայրը, Ճոն Լոքվուտ Գիրլինկ, վեսէյան երեցի մը որդին, այն ատեն Պոմպէյի գեղարուեստից վարժարանին մէջ ճարտարապետական քանդակագործութեան ուսուցիչ անուանուած էր, և հոն բնակութիւն հաստատած էր իր երիտասարդ հարսնի հետ, որ նոյնպէս հերձուածող երեցի մը դուստրն էր։ Ռիւստիարտ խորապէս զգածուած բողոքական մ'է, բարկոյաններու ցեղէն։ Իւր մայրը գեղեցիկ էր, վառվառն հանճարով, և շատ պատմութիւններ կը պատմէր իր մանկան հազիւ թէ սա զանոնք հասկնալ կարենալու չափ մեծցաւ։ Հայրը գերազանց գծագրող մ'էր (1891ին գեղեցիկ հեղինակութիւն մը հրատարակեց «Մարդն և անասունը Հնդկաստանի մէջ» անունով) և փոքրիկ մանկան հանճարը կը բացուէր ու կը զարգանար այսպէս կենդանի և լուսաւոր պատկերներու միջև։

Ով որ ծնած է զաղթականութեանց մէջ, անոր համար առաջին աքսորն է ուղեւորութիւն մը դէպ ի մայր հայրենիք։ հազիւ թէ մանուկն հինգ կամ վեց տարեկան կ'ըլլայ, հազիւ թէ կրնայ յանձնուիլ օտար ձեռքերու՝ որոնք մայրենի ձեռքեր չեն, ծնողքը կը ղրկեն զայն իսկոյն ազգային վարժարան մը՝ դաստիարակուելու համար։ Ռիւստիարտ Գիրլինկ ինքն ալ բերուեցաւ Անգլիա, մի քանի ազգականներու ջով, որոնք շատ սեղմ էին մտքով և կրօնամուլ՝ ամենախիստ կերպով. և անտարակոյս ասոնց ջով երջանիկ չապրեցաւ։ 1878ին մտաւ United Service College վարժարանը, այն-

պիսի ընկերներու ջով որոնք գրեթէ ամէն ալ կ'ուզէին զինուորական ասպարիզի նուիրուիլ։ Բան մը որ Գիրլինկի համար անկարելի էր, որովհետեւ տեսութիւնը տըկար էր և չափազանց ընթերցումներով ժամանակէն առաջ փճացուցած էր աչքերը։ Չուզեց շարունակել իւր ուսումները Համալսարանի մը մէջ, և տաննուրեւ տարեկան հասակին վերադարձաւ Հնդկաստան, ստանձնելու համար «Լանդրի քաղաքային և զինուորական յրադիր»ի փոխ-խմբագրի պաշտօնը, որովհետեւ իւր հայրն այս միջոցիս Լահոր փոխադրուած էր, իրրեք քաղաքային թանգարանին վերատեսուչ։ Ահաւասիկ ուրեմն ինքը վերադարձած հայրենի հողոյն վրայ, որուն լեզուն խօսած էր մինչդեռ փոքրիկ մանուկ մ'էր, շնչած էր անոր քաղցրաբոյր օդը, լսած էր անոր աւանդավէպները, ահաւասիկ ուրեմն ինքը դարձաւ արուեստագէտ հօր մը ջով, թանգարանի մը մէջ որ լի է ամենայն թանկագին և գեղեցիկ յիշատակներով։

Տաննուրեւ մինչև քսաներեք տարեկան եղած միջոցները բացուեցաւ Ռիւստիարտ Գիրլինկի հանճարը, այս շրջանիս մէջ, այնու հանդերձ որ ծանրաբեռնուած էր լրագրի խմբագրութեան տաժանելի գործով, հրատարակեց մին միւսին ետեւէն, պատմութեանց չորս հատորներ, որոնց մէջ ամփոփուած են եթէ ոչ ամբողջովին իր ամենագեղեցիկ մանրամասնութիւնը, այլ գէթ անոնց մեծամասնութիւնը։ «Լանդրի քաղաքային և զինուորական յրադիր»-ին մէջ երբեմն յանկարծ դատարկ տեղ մը մնացած կ'ըլլար, և Գիրլինկ, տեղոյն ընդարձակութեան համեմատ կը լեցնէր զայն՝ քերթուածով մը կամ իւր արձակ գրութիւններով. և իւր առաջին քերթուածները, որոնք յետոյ առանձին հատորի մը մէջ ամփոփուեցան Departmental Ditties (Նախնեային երգեր) վերնագրի տակ, երբեմն կատակարարութիւնը են, կրքեմն շնորհալի, երբեմն ալ տգեղ, Գիրլինկ արուեստագէտը նրբաբաց իւր ճաշակը և վարժապետ մ'եղաւ, սակայն պէտք չենք

բնաւ մոռնալ, որ իւր ընտանեաց շրջա-
նակէն դուրս, ուր ամէնքն ալ ուսեալ էին
բայց և ոչ մին կարող էր զինքն առաջ-
նորդելու, իւր բարեկամաց մէջ չունեցաւ
և չէր ալ կրնար ունենալ մտաւորական
զարգացեալ անձինք, և հետեւաբար միայն
մեծ հասարակութիւնը եղաւ իր միակ դաս-
տիարակն և ուսուցիչը:

Քիբրլինկի հասարակութիւնը Հնդկաս-
տանի մէջ է լաւագոյն մասն այն դասա-
կարգին որ Անգղիոյ մէջ վարչական խումբը
կը կազմէ. ոչ ազնուապետականք, այլ
միջին դասակարգի ընտրելագոյն ծաղկը,
այն դասակարգի որ որդւոց որդիք կը
բարձրանայ միշտ պաշտօններու վարժա-
րանաց մէջ, բանակի մէջ, նաւատորմիդի
մէջ, և քաղաքային ու գաղթականութեանց
տնտեսութեան մէջ: Այս դասակարգին,
այս վերապահեալ և փակ, այս լոին և
միայն զօրծոյ ազնուապետութեան դասա-
կարգին ձայնն եղաւ Քիբրլինկ: Եւ յետոյ,
երբ ժամանակը պիտի հասնի և ինքը պի-
տի տիրէ մեծ հասարակութեան վրայ,
բանաստեղծը պիտի յիշէ միշտ թէ որոնք
եղան իր առաջին դատաւորները, պիտի
յիշէ զանոնք որ իւր առաջին սխալներն
ուղղեցին:

Տիեզերակալութեան քերթուածները

Հնդկաստան, որքան ալ մեծատարած
և անհուն է, այնու հանդերձ միշտ բանտ
մ'է անգղիացի-Հնդիկներու. և վեց տարի
անդադար տաժանեի վաստակէ մը վերջ,
Քիբրլինկ կը փախչէր անտի անժոյժ ու-
րախութեամբ մը, երջանիկ լիովին որ
վերջապէս կ'երթար տեսնելու աշխարհիս
ուրիշ մէկ երեսը:

Եւ կ'երթայ, Արեւելքի ճամբով, անց-
նելով Ճարոնէն և Ամբրիկայէն, դէպ ի
Անգղիա: From Sea to Sea « ծովէ ի
ծով » մէկ ծովէն դէպ ի միւսը կը զրկէ
նա իւր Հնդկաստանի լրագրին թղթակ-
ցութիւն մը որուն մէջ ամենադիւրին է
իւր մտածութեան զարգացման փուլերուն
հետեւիլ. Կ'ըսէ. « Ով սիրելի ընկերակիցք

իմ, որ հոն ի վար Հնդկաստանի մէջ
այնքան տաք կը զգաք, և կառավարու-
թեան դէմ կը գանգատիք, գիտե՞ք սա-
կայն որ գեղեցիկ է Անգղիացի ըլլալը »:
Եւ դարձեալ՝ ուրիշ տեղ մը կը զրէ. « Աշ-
խարհիս կէսը մեր տունն է »:

Քիբրլինկի տիեզերակալութեան ներթին
վրայ գրած առաջին քերթութիւնն է Անգ-
ղիոյ դոշակի. սակայն անոր մէջ բարդ ի
բարդ խուժող զաղափարները լաւ կեր-
պով ազուցուած չեն իրարու, և այս Քիբ-
լինկի յաջողագոյն աշխատութիւններէն
մին չէ: Միայն, 1895ին, իր Երգերու
գիրքին մէջ, Թափանցիկ խորհրդանշի մը
ձևին տակ, նոր գլուխ մը սկսող տողե-
րուն մէջ, կը գտնուի առաջին մեծ դա-
սը, ցուցնելու համար թէ ինչ պէտք է
ըլլայ թագաւոր ժողովուրդի մը բարակա-
նը: Juggleի օրէնքը՝ օրէնք մ'է կարգա-
պահութեան, հասարակաց շահերու հպա-
տակութեան, և անհատական արիւթեան:

Ինչպէս որ հին մարգարէները կ'առաջ-
նորդէին Խաղայելի ժողովուրդը դէպ ի
սուրբ տապանակը, Քիբրլինկ ալ կ'առաջ-
նորդէ իւր ժողովուրդը դէպ ի հաւատը՝
Անգղիոյ վրայ, դէպ ի հպարտութիւն Աս-
տուծոմէ ընտրեալ ժողովրդեան: Եւ սաղ-
մոսի ձևով կ'երգէ՝ ամէն ինչ որ իր եր-
կրին մեծութիւնը կը կազմէ. կ'երգէ ծո-
վային զօրութիւնը և ամէն ափանց վրայ
ունեցած փարոսները. կ'երգէ մեծ առա-
սանները որոնք մարդկային մտածութիւնը
կը տանին ովկիաններու խորոց մէջէն.
կ'երգէ դիակներն որ ալեաց վրայ կը ծը-
փան և մեռեալները որ ձիւներու մէջ կամ
անապատին աւազներու մէջ թաղուած են.
կ'երգէ սպիտակ փառապանծ քաղաքները
և հպատակ ժողովուրդները, որոնք կ'ը-
սեն մայր հայրենեաց. « Մի՛նք որեւէ ենք »:
Այս կայսերական երգերու մէջ ամենա-
գեղեցիկ է Զինիթի քերթուածը, ուր մի
զհետ միոյ, զանազան ազգերու ժողովուրդ
կու գան փառաւորելու այն ընտանեկան
յարկը որ կանգնուած է անկոտրուած
տիեզերակալութեան գաւառի մը վրայ:
Աւատրալիա, Նոր Զելանտա, Հարաւային

Ափրիկէ, Գանատա, Անդրեան կղզիք
կ'անցնին շար ի շար ամէնքն ալ աչքեր-
նին սեւեռած մայր հայրենիքի վրայ, և
քերթուածին տունները, ծանրաբեղուն՝
գործունէութեամբ և բուրմամբ, կը բզզան
ինչպէս մեղուաց պարս մը իրենց թա-
գուհւոյն շուրջը:

Զօրանոցի երգերը

Անգղիացիք բննադատը կը յամառին
ընդհանրապէս և չեն ուզեր զՔիրլինկ իր-
րև ճշմարիտ բանաստեղծ մը ճանչնալ,
եթէ ոչ մի միայն իրեն Զօրանոցի կրգե-
րուն մէջ: Ասոնք գրէթէ ամէնն ալ զըր-
ւած են ժողովրդեան լեզուով և գաւառա-
բարբառով, և անկարելի է թարգմանել
սակայն իրենց ունեցած ժողովրդականու-
թիւնը անհերքելի վկայութիւն մ'է անոնց
մէջ գտնուած շնչոտի, չափի, իմաստի
ճշտութեան: Այն բանակը որ այս երգերը
ներշնչեց, է մի և նոյն բանակը զոր Քիր-
լինկ ճանչցած ու սիրած էր Հնդկաս-
տանի մէջ, և որուն տկարութիւնները դեռ
չէր հասկցած. մուրացկաններու բանակ
մը, ափ մը ագնուականներէ առաջնոր-
դուած: Եւ իւր քերթուածները նուիրուած
են առ թոմմի Աղբրնա, որ անգղիացի
հետեական զինուորի աւանդական տի-
պարն է. Քիրլինկ կը քաջալերէ զինքը,
կը մխրթարէ, և ինքն ալ անոր ընկերը
կ'ըլլայ. և չտար բնաւ անոր նուաստ ու
խեղճ զգայականութիւններ, այլ կու տայ
ճշմարիտ յուշումն սրտի, և ճշմարիտ բա-
նաստեղծութիւն: Ժամանակներ վերջ, երբ
պիտի վերադառնայ երգելու դարձեալ զին-
ուորական երգերը թրանգվալի մէջ, այլ
ևս պիտի չխօսի բնաւ թոմմիի վրայ, ա-
րուեստով եղած և վարժեալ զինուորին
վրայ, այլ պիտի խօսի լոնտրայի պզտիկ
խանութիւններին վրայ, անգղիական, աւրա-
սորայեան կամ Գանատայի դաշտերու գիւ-
ղացւոյն վրայ, որ ամէն կողմէն կը վազէ
մեծ հայրենիքի կոչին. և պիտի երգէ այն
պատերազմի մէջ զօրաց ընթացքը և նա-
հանքը, և քիչ տողերու մէջ պիտի սահ-

մանափակէ տեսարաններ, պատերազմներ,
հոգիներ: Յետոյ, խաղաղութիւնը կնքուե-
լէն վերջը, այն բանաստեղծը՝ զոր ամ-
բաստանած էին իբրև թէ կը սիրէ միայն
արեան հոտը, իբրև թէ միայն պատե-
րազմական երաժշտութիւններ կրնայ նուա-
գել, պիտի փառաւորէ ու պանծացնէ փո-
խարինումը, սերմանացանին շարժման մէջ.
« Հոն ուր կը պեղեմ իմ ազօսս, այս
կարմիր գետինին վրայ որ արեւուն դիմաց
կը փայլի, պիտի փոխարինեմ այն ամէն
չարեաց որ գործուեցան հանդէպ կենդա-
նեաց և մեռելոց »:

Ծովու երգեր, երգեր առ Աստուած

Ահաւասիկ ծովու երգերն ալ: Անգղիա-
ցիք ամէնն ալ կը սիրեն ծովը. և Քի-
րլինկ ուրիշներէն աւելի կը սիրէ զայն
իւր զանազանութեան և իւր մտերմութեան
մէջ: Եւ կը պանծացնէ անոր ալիքը, զե-
փուրը, առաքաստները, առասանները.
ամբողջ հին նաւերը ձայն մը կ'ունենան
իրեն համար: Կ'երգէ նաւաստուոյն ուրախ
անմտածութիւնը, զուարթ՝ որովհետեւ կը
մեկնի, կու տայ հրաժեշտի ողջոյնը, կը
վազէ վտանգներու ընդառաջ. զէպ ի ռւր.
իրեն ինչ հոգ. « Հոն ուր ամենագեղեցիկ
ստտերը ճշմարտութիւն են, սիրելիդ իմ,
և ամենէն աւելի գեղեցիկ պատմութիւն-
ները իրականութիւններ են »: Կ'երգէ գոր-
ծիններու կարողութիւնը, շոգին, դռնակ-
ները, պողպատէ տախտակները, ճշտու-
թեան գործին որ հեռաւորութիւնը կը
չափէ և ամանակաչափը կը զարնէ, գի-
տակ իր միութեան և իւր ուժին. կ'երգէ
Mc Andrem's ի երգին մէջ գեղեցիկ նա-
ւուն վեճմութիւնը. կ'երգէ սաքսոնեան
բարբարոս քնարերգութեամբ մը սպիտակ
երկվաճներու արշաւները — վայրագ երի-
վաճներու՝ որոնք կոհակներու կատար-
ներն են:

Բանաստեղծ ընդարձակածաւալ միջո-
ցի, բանաստեղծ զսպուած ծովերու, բա-
նաստեղծ այն պայծառաչոյի զաւակնե-
րու, որոնք առանց բնաւ ցաւելու կը թո-

դուն իրենց երկիրը, որովհետև իրենց ցեղին կարողութիւնը շատ աւելի սիրելի է իրենց համար քան թէ պապերուն ապրած երկիրը ։ Քիրքինկի երգերու մէջ չկայ բնաւ հայրենաբաղձութեան աղաղակ մը, որ մեկնելու հայրենաբաղձութենէն ծնած չլլայ ։

ինքն լաւ գործաւոր մը (ինչպէս յաճախ կը սիրէ անուանել ինքզինքը), լաւ հասկցած է որ մեծ ժողովուրդի մը, և մանաւանդ անգղիացի ժողովուրդեան, գմբեթակալ խարխալը՝ բանալին, պէտք է ըլլալ կրօնական. և նա երգած է ամենազեղեցիկ աղօթքներով, զԱստուած, Էհովա մը զոր իւր ցեղը կը ճանչնայ, կը պատուէ կը պաշտէ, և որ փոխադարձ պիտի պաշտպանէ իր ընտրեալ ցեղը և պիտի տայ անոր զօրութիւն ու մեծութիւն ։

Տղայոց համար

Վայրկեան մը Քիրքինկ ալ կորսնցուց իւր ժողովրդականութիւնը ։ Երբ հարաւսփրկեան պատերազմէն վերջ, փնտոց պարտութեանց պատճառները և հրապարակաւ պարզեց իր երկրին տկարութիւնները, երբոր բարձրաձայն հրապարակեց զգալին բանակ մը կազմելու հարկաւորութիւնը, երբոր նախատեց cricket և foot-ball խաղացողները, «ասուեակ հագուող ապուշները», քինախնդրութեանց աղաղակներու ալիք մը բարձրացաւ իրեն դէմ, և զեռ այսօր իր հայրենակիցները բոլորովին ներած չեն իրեն ։ Սակայն ինքն իշխան է ժամանակին, ինչպէս են ամէն ստուգիւ բանաստեղծներ ։

Նա բանաստեղծն է երևակայութեան և գաղափարանիշներու. երբեմն ալ բանաստեղծն է տղայոց, և այս փոքրիկ հոգիները խնդացնելու ծիծաղեցնելու համար, գտած է իւր ամենաթարմ և մանկական գիւտերը ։

Կ'ուզէ զուարճացնել զանոնք և միանգամայն կ'ուզէ որ անոնք ըմբռնեն իւր խօսքերը՝ երբ միծնան ։ Այս պատճառաւ իր երկու հրատարակութեանց մէջ, «Անգլո-պատմութիւն» և «Ժիշտ աշպէս պատմութիւններ», կը զըտանութիւն զօրաւոր դասեր կեանքի և արիւնքի մէջ ։

Եւ յիշատակեց իր անուանակոչութիւնը ընելէ վերջը ուղղակի ներթին մէջ մտնեց ։ Աստեղագիտութիւնը պիտի խօսի երկնային մարմնոց յարաբերական բոլոր ծանօթութեանց վրայ, անոնց շարժումներուն, միջոցի մէջ անոնց բաշխումներուն, անոնց փոփոխ հեռաւորութիւններուն, անոնց բնական կազմութիւններուն, անոնց մէկ մէկու վրայ ունեցած փոխադարձ ազդեցութիւններուն վրայ ։

Թողունք որ Փլամարինը ինքը խօսի ։ Ֆրանսացի այս համբաւաւոր աստղագետը կ'ըսէ. Աստեղագիտութիւնն է գիտութիւն տիեզերաց ։

Տիեզերք բաղկացած է այն ամէն բանէ որ գոյութիւն ունի ։ Երկիրս՝ որոյ վրայ կը բնակինք, Արեւը, Լուսինը, մոլորակները, աստղները, գիսաւորները, մէկ խօսքով՝ գոյութիւն ունեցող բոլոր իրերն կը կազմեն տիեզերքը. և աստեղագիտութեան առարկաներն են ։ Ատենօք, երբ իրականութիւնը կը տգիտանային և սովորական զգայարանաց պատրանաց վրայ հիմնուած, կը հաւատային՝ թէ Երկիրս անշարժ է տիեզերաց կեդրոնին վրայ, խարխալ և նպատակ ստեղծագործութեան, անոնք՝ որոնք կ'ուզէին զբաղիլ միայն դրական և շօշափելի բաներով, աստեղագիտութիւնը կը համարէին իբր գիտութիւն մը որ կը զբաղի վերը գտնուող և զրեթէ անգոյտ բաներով ։ Բայց այսօր որ ցոյց տրուած

ԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Տես էջ 49)

Այս անուանակոչութիւնը ընելէ վերջը ուղղակի ներթին մէջ մտնեց ։ Աստեղագիտութիւնը պիտի խօսի երկնային մարմնոց յարաբերական բոլոր ծանօթութեանց վրայ, անոնց շարժումներուն, միջոցի մէջ անոնց բաշխումներուն, անոնց փոփոխ հեռաւորութիւններուն, անոնց բնական կազմութիւններուն, անոնց մէկ մէկու վրայ ունեցած փոխադարձ ազդեցութիւններուն վրայ ։

Թողունք որ Փլամարինը ինքը խօսի ։ Ֆրանսացի այս համբաւաւոր աստղագետը կ'ըսէ. Աստեղագիտութիւնն է գիտութիւն տիեզերաց ։

Տիեզերք բաղկացած է այն ամէն բանէ որ գոյութիւն ունի ։ Երկիրս՝ որոյ վրայ կը բնակինք, Արեւը, Լուսինը, մոլորակները, աստղները, գիսաւորները, մէկ խօսքով՝ գոյութիւն ունեցող բոլոր իրերն կը կազմեն տիեզերքը. և աստեղագիտութեան առարկաներն են ։ Ատենօք, երբ իրականութիւնը կը տգիտանային և սովորական զգայարանաց պատրանաց վրայ հիմնուած, կը հաւատային՝ թէ Երկիրս անշարժ է տիեզերաց կեդրոնին վրայ, խարխալ և նպատակ ստեղծագործութեան, անոնք՝ որոնք կ'ուզէին զբաղիլ միայն դրական և շօշափելի բաներով, աստեղագիտութիւնը կը համարէին իբր գիտութիւն մը որ կը զբաղի վերը գտնուող և զրեթէ անգոյտ բաներով ։ Բայց այսօր որ ցոյց տրուած